

ելթէ տացէ մեզ յաղթութիւն խաչդայդ, արհամարհեմք զամենայն պաշտաւ մունս մեր, և զՔրիստոս պաշտեմք՝ որ կայ 'ի դմս:

Եւ 'ի նմին ժամու ելանէր Յոյն մի, Պողիկարպոս անուն, քուերորդի կայսեր, և խնդրէր մենամարտիկ 'ի զօրացն վախթանգայ: Եւ ոչ զք վատհացաւ ելանել, քանզինա էր սպանող զօրագրւխին Պարսից: Ապա ասէ վախթանգ. Առիւծ ընդ աղուեսու: Ի ոչ ելանէ, բայց զի ցուցցի զօրութիւն խաչիս Քրիստոսի՝ ելից ընդ քեզ: Եւ կնքեալ զանձն նշանաւ խաչին, երկրպագեալ և համբուրեալ զնա, չորսաւ ընդդէմ Պողիկարպոսի, և ասէ. Որովհետեւ գիտացեր եթէ երկրպագեաց զօրքս խաչին Քրիստոսի, և խնդրես տակաւին մարտնել ընդ մեզ, ահա արիւն քո 'ի գլուխ քո: Եւ մերձ երթեալ՝ հհար զնա,

1 Այսինքն, ես որ Թագաւորս եմ՝ առիւծ, ընդ ծառայիդ՝ աղուեսու:՝ որպէս յաւելու վախթանգ պատմի:

2 Յաւելու օրինակն Պրոսէի ընդ վախթանգայ. Եւ քառասուն և երեսն հազար՝ ի զբան վախթանգ:

և ճեղքեաց յերկուս, և զարձաւ առ իւրսն՝ փառաւորելով զՔրիստոս: Դարձեալ ճակատել սկսան Յոյնք, և փախոյց զնոս վախթանգ մինչև ցծոյն: Եւ յետ այսորիկ հանդէս արարին երկոցունց կողմանցն. և էին անկեալքն 'ի Յունաց եթանասուն և երկու հազար 2. և ժողովեալ զչեբերայսն Յունաց, և արկեալ ընդ թուով՝ եթանհարիւր ութսուն հազար 3, և առաքեցին զամենեսին առ կայսրն 'ի ձեռն ներսեսի և Ստրեբրսեհի իշխանացն: Զոր տեսեալ կայսր՝ խնդաց. և եկն առ վախթանգ, և երգուան միմեանց. և ետ կայսրն զթուղարս և զլլարճէթ, զոր առեալ էր 'ի վրաց, և խոստացաւ տալ զգուստոր իւր վախթանգայ: Եւ զարձաւ վախթանգ 'ի սուն իւր մեծաւ ինդուլթեամբ:

Գայ. որ չիք յօրինակի մերում:
3 ԶԹուանշանն լիւ (780000) Պրոսէի վերպաւաւ լիւ (չիւ, 680000 ?) ընթերցեալ, և զգուստոր լինի հայ բնագրին:

Շարունակելի:

ՍԶԳԱՅԻՆ ՅԻՇՈՏԱԿԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՅ

(Տես Հատոր խԱ. էջ 341):

ՍԶԳ. — Մինչդեռ անցեալ տարւոյն Բագմավիպի մէջ էլմիածնի ամսոյն Նոբրտի Տրապի-զոնեցի Տէրմանուկեան Յովհաննէս վարդապետի, 1763 ամին առ Յակոբ Ե կաթողիկոս քրած թուղթը կը հրատարակէինք, ազգասէր և ուսումնասէն անձն մի, Պ. Յ. Տ. Կ'աղարկէր առ մեզ նոյն նստիակին հետեալ նամակը, զոր օրինակեր էր Բարիզու Ազգային Դիւանաց մէջ գտնուած իսկագրէն. զոր և 'ի յանձնաթուղթենէ պաշտօնատեարց՝ գտնուած գտեր էր 'ի կարգի տաճկալեզու գրուածոց, իբրև նոյն ազգին վերաբերեալ գրութիւն մի: Նոբրտին քրած է զայս ուժ տարի յետոյ քան զնախընթաց հրատարակածնիս, առ 'Լազար Ամարմին, և պիտկոպոս Տրապիզոնի, երբեմն նուիրակի 'ի Ռուսելիս, որ այն ատեն կը գտնուէր 'ի Միջին Իտալիս. ուստի և թղթոյն հասցէն երկայարար գրուած է այսպէս. « Աստուծով հասցէ գիրս 'ի ձեռն Տեառն 'Լազարու Արհիպապատում՝ Եպիսկոպոսի և աստուածաբանութեան վարդապետին՝ առ 'ի բարին, 'ի Վէնէսիկ և կամ 'Անքոնիս: — Իսկ երկրորդ հատուածն է գրութիւն քերդոպական՝ Կարնեցի Յովհաննէս անուն Տիրացուի մը, որ Սողոմոն վարժապետ մականուամբ կը կոչուէր ժողովրդեան մէջ, և ցայտօր տակաւին կենդանի ծերունիք այսու անուամբ կը յիշեն զնա: Քերդուածին խորագիրն այսպէս ունէր. « Յաղագս մեծի սովոյն և սղութեան, որ եղև 'ի քաղաքս Կարին և 'ի չընկայսն նորին, 'ի Թոյլորութենէ ամենաբարի կամացն Աստուծոյ, 'ի խրատ և 'ի զգաստութիւն ներկայ ժամանակս ամբարշտեցեցոյն. շարագրեալ հոմարկան ոտալափութեամբ յամենանուաւ մանկավարժ նստարէ Մահտեար Յովհաննիսէ 'ի սոյն քաղաքէ. յամ Տեառն 1813, 'ի մերս թուոյն ՌՄԿԻ Ե: Այս ետքի գրուածոյս օրինակը ուղարկէց մեզ Կարնեցի բանասէրն Աղապաւեան Մկրտէչ:

ԹՈՒՂԹ ԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ՄԸ

Գերազանց և քաղմբախտ հօրոյ իմոյ հագնելու
կանի, Տեսանց Ղազարոս արևիսպատուս նպիս-
կոպոսի և աստուածաբանութեան վարդապետի,
անյաց սիրով և յոյժ կայստիւ գտորք արդ համ-
բուրեմ, որ և լին միշտ ողջ աս 'ի ցնծութիւն և
'ի պարծանս իմ:

Ընդ սիրասարսի համբուրիս և ողջուն-
առաք գրոյս, յայտ առնեմ՝ գերազանց
հօրդ իմոյ, զի 'ի վաղուց ժամանակաց
ոչ գիտէաք զորպիսութիւնն քո, և ոչ
ամենեին սուր կայ առնուլդ և լինելդ.
սակս այն ոչ կարացաք գիրս յղել և ի
մանալ զորպիսութիւնս միմեանց. և մա-
նաւանդ 'ի հեռի և պանդուխտ երկիր
տարագրին և շրջին միմեանց է պատ-
ճառ, զի քսան ամ լրացաւ՝ որ բաժա-
նեալք մեք 'ի միմեանց: Իսկ 'ի յԱժ-
տարխան լինելն մեր, յամին Քրիստոսի
1755, անտի երկու սիրոյ գիր յղեցի
հօրդ իմոյ 'ի մեծ Պօլիս, մինչ յԱռու-
մելու նուիրակութեան գործդ աւար-
տեալ էիր, և կարծեմ նոյն գրեանքն
մեր հասին առ քեզ: Իսկ մեք 'ի յԱժ-
տարխանու եկաք 'ի սուրբ ավտոն էջ-
միածին, որ էր թիւն փրկչին 1758, և
'ի նոյն ամին լուսահօգի սրբազան Յա-
կովբ հայրապետն՝ զանարժանս նպիս-
կոպոս ձեռնադրեաց, և առաքիտաց 'ի
Հնդկաց երկիրն, սակս նուիրակու-
թեան գործոյն 'ի մէջ Հայկազեան ազ-
դին մերոյ: Եւ 'ի գնալն մեր նաւա 'ի
Բանկալա՝ յերկիրն Հնդկաց, յաղագս
մեղաց մերոց և վաստադրութեամբ՝
պատահեցաք յոյժ սաստիկ արէկոծու-
թեանց. և նաւն մեր միով աւուրք ճա-
նապարհաւ հեռի 'ի ցամաքէն՝ ընկըզ-
մեալ խորտակեցաւ. և բազումք տախ-

տակաւ ելաք 'ի ցամաք՝ ողորմութեամբն
Աստուծոյ. իբր ապրեցաք, և ազդի
ազդի մահառիթ վտանգաց հանդիպե-
ցաք: Եւ ցամաքն էր բազմախիտ ան-
տառս ծառոց, գազանաբնակ. ուր գետք
անդնդախորք բազումք և անմարդա-
բնակ. և բազումք յընկերաց մերոց՝ ա-
ռիւծ գազանքն պատառեալ մահացու-
ցին, և անճարակ մնացաք: Վասն որոյ
յերեկոյին կանուխ ելեալ 'ի վերայ ծա-
ռոցն՝ Կիչերն ողջոյն մնայաք աներկիւղ
'ի գազանաց: Թողում զայլ փորձու-
թիւնս՝ սակս երկարութեան, մանա-
ւանդ քաղցն և անսուաղութիւնն՝ զորս
կրեցաք. զի յիսուն և եօթն օր մնա-
ցաք 'ի մէջ գազանաբնակ անտառին.
զի ոչ երբեք կարացաք գտանել զճա-
նապարհ և գնալ 'ի շինութիւն ինչ,
վասն բազմութեան գետորէից և երկիւ-
ղի գազանաց, զի զվեռեալ ճէյրանս և
զխողս հում ուտէաք գազանաբար. եր-
բեմն սայլանկէօզ և բաղուրիայ ևս զը-
տանէաք, հում ուտէաք. մինչև յիսուն
և եօթն օր այսպէս գառնութեամբ ան-
ցուցաք զկեանս մեր: Եւ շնորհին Աս-
տուծոյ ինկիլիզի հազարապետն եկն
անդ բաղում զօրք, սակս ըմբռնելոյ
աւազակաց. և յոնկարծ եգիտ զմեզ,
տարաւ 'ի քաղաքն Տուքա կոչեցեալ՝ 'ի
մէջ ազգին մերոյ. քանզի այժմ՝ Բան-
կալայ՝ է 'ի ներքոյ ինկիլիզի տէրու-
թեան: Եւ զայս ևս յայտ առնեմ՝ քաղ-
ցրափայլ հօրդ իմոյ, որ է մեծ պան-
չելք. զի յայնմ ժամու մինչ ընկղմեալ
խորտակեցաւ նաւն մեր, ամենայն ինչ-
քըն մեր, և ինչ որ կայր 'ի նաւին,
համայնքն ընկղմեցան 'ի խորս ծովու:

բայց սուրբ մեռոնն 'ի մեծ անտուկին էր, անտուկն ընկղմեցաւ 'ի խորս ծովու. յետ տասն և ինն ատուր՝ սուրբ մեռոնն գտաւ յեզր ծովուն՝ ամբողջ իւր ամանովն, կնքովն մերով կնքեալ. անարատ՝ որպէս որ նախ էր. իրաւի մեծ ցնծութիւն եղև մեզ 'ի նոյն դառն ժամանակին: Եւ այժմ չորս ամ եղև՝ որ եկաք 'ի սուրբ աթոռն իշմիածին անջնաս. և այս երկու ամէ՛ որ ելեալ եմ 'ի սրբոյ աթոռոյն իշմիածին, սակա գործոյնուիրակութեան Ուռումեալու. բայց յաղագս սասանմանցն ժամանակին՝ ոչ կարացաք զգործն մեր կատարել. վասն որոյ եկաք 'ի մեծն Պօլիս, և այժմ ունայն 'ի դործոյ նստիմք աստ, մինչև Տէր յաջողեացէ զբարի ժամանակ: Եւ տեղս 'ի մեծն Պօլիս, 'ի յազնուաբարոյ իշխանաց զարմէ՛ բարեպաշտոյ հրաւրատաց և 'ի վաղեմի բարեկամաց, ըզբաղցրաբարոյ օրհնեալ փրկիպաղս աղան գտեալ աստ, մեծ ցնծութիւն և մխիթարութիւն եղև անարժանիս. որպէս երբեմն զհայրդ իմ՝ բազում սիրովն մխիթարէին, և այժմ զնոյն առնեն անարժանիս, զի գեր 'ի վերոյ բազում սիրով շահն և մխիթարեն զմեզ. որոյ Տէր Աստուած երկար կենօք պահեացէ, հանդերձ ծաղկեալ որդւովքն և զաւակօքն իւրովք, ամէն: Զի Մուրատ աղայն վախճանեալ էր՝ ոչ գտի զնա կենդանի, որոյ հոգին Տէր լուսաւորեացէ երկնային լուսովն, և իւրայնօցն անացելոցն երկարկենօք պահեացէ բարեբարն մեր Աստուած. ամէն: Նաև տեղս 'ի Ղալաթիա Սեղբոսեան Խոճայ Թումային՝ վաթսուն ղուռուշ ստակ եւ տու, փրկիպաղս աղային ձեռամբն, որ այս Խոճայ Թումային եղբայրն՝ տեղդ վենետիկ է. գրէ իւր եղբօրն տեղդ

Սեղբոսեան պարոն Յովհաննիսին, որ այս վերոյիշեալ վաթսուն ղուռուշն տայ հրամանացդ պարոն Յովհաննէս, հանդերձ սոյն գրովս. և առեալ հօրդ իմոյ այս ժամուցն, խնդրեմ ներուսն չնորհել սակաւութեանն, և զմեզ ոչ մուացեալ՝ սիրայիր օրհնառաք գրով յիշեցես, և միամտեցուցես զմեզ սակա գրոյս եղեալ ստկին հասանելոյն անպատճառ. նաև զորպիսութիւնդ յոյժ փափագեմ իմանալ: Վերջապէս բազում սիրով զայս ևս խնդրեմ, զի իբրև գիր յիշցես անարժանիս, իմ և քո ազնիւ պատուական և 'ի վաղուց ընտիր սիրելի փրկիպաղս աղային՝ մէկ սիրոյ գիր յիշցես, որ նա ևս կարի սէր ունի ընդ քեզ. զի նախկին պատճառն հրամանդ ես՝ որ փրկիպաղս աղայն այսքան սիրով միշտ մխիթարէ զանարժան. մանաւանդ սոյն գրոյս յղելոյ մեծ պատճառն փրկիպաղս աղան եղև. զի ստիպմամբն նորա և իւր ձեռօքն յըղեցի զգիրս զայս. զի ես ոչ ոք ճանաչէի, նա հաւատարիմ անձամբ յղեաց զգիրս զայս և ստակն. ուրեմն ասացելոցս խնդրեմ զանց մի առնիցես:

Այլ և իմ եղբարքն և մայրս Աստուծով կենդանի են. մեծ եղբայրս Պետրոսն տեղս է տնով. Կիւրեղն հարսանիք արաւ, երկու զաւակ ունի. Մարիամն մէկ որդի ունի. սուրբ աջդ համբուրեն:

Գրեցաւ գիրս ձեռամբ իմով 'ի մեծն Պօլիս, 'ի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին. թիւ փրկչին մերոյ 1770, յունուարի 19:

Մատայ Տէրութեանդ
Յովհաննէս Վարդապետ
որ նախ Սեղբոս կոչէի:

Ե

ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ՍՈՎՈՒՆ ԿԱՐՆՈՅ

(1813)

Ի պատմագիրս այսպէս ճառին,
 Ըստոյդ գըրեալ և հաւաստին,
 Վասն մերոյս այս քաղաքին
 Հիմնարկման, շինման սորին:
 Այս բարեղի քաղաք Կարին,
 Շինեալ վաղուց յաւուրս հին,
 Զեռամբ Կարէն թագաւորին,
 Հայկեան տոհմիս մեր արքային:
 Յետոյ գոյիւք բարձր հրամանին,
 Թէոգոսի մեծ արքային,
 Նորոգի սա և բերդ սորին,
 Իբրու պարգև մերոյ ազգին:
 Վերակացուց շինման սորին՝
 Մեր երջանիկ սուրբ Հարբն էին.
 Մովսէս ընտրեալ խորենացին,
 Ընդ գերմաստ Անյայթ Գաւթին:
 Որք օրհնութեամբ ըզշինն արկին,
 Ժամերգութեամբ յար պաշտօնին,
 Մատուցմամբ սուրբ պատարագին,
 Խորհրդաւոր զսա կառուցին:
 Եօթանասուն երկու՝ զըրսին,
 Եւ տասն երկու՝ իշխալային,
 Առաքելոց, աշակերտին
 Յայս թիւ՝ շինեալ զուլայք սորին:
 Զկարմորակ սուրբ նըշան խաչին,
 Թեւեղ եդին զլուխ պարբսպին,
 Եւ զայլ բազում քառաթեկին,
 Յորմունս սորին սեղմեցուցին:
 Ի յաւարտել շինման սորին,
 Ի պարբսպաց վերայ ելին,
 Սուրբ նըշանց և սուրբ մասամբ՝
 Ի չորս կողմանց տեսանագրեցին.
 Մտեալ մաղթմամբ՝ զսա յանձնեցին
 Տեսան Աստուծոյ խնամակալին.
 Պահէլ ըզսա գիպմանց չարին
 Լընուլ բարեզք բազմագունին,
 Որ և խնամով Տեսան Արարչին,
 Եւ շնորհիւ իւր սուրբ նըշանին,
 Շըբեղացեալ ճոխ ըստ գոյին,
 Առատացեալ բարեք սորին:

Յաւուրց տնտի մինչ ցարդ, ասին,
 Եւ 'ի ճառսս գըրոց պատմին,
 Թէ գըրով սա լի ըստ գոյին,
 Վայելչութեամբ ճոխ պերճային:
 Եւ շըրջակայ վիճակ սորին,
 Բասեն, և այլքն՝ որ ըստ կարգին,
 Յոյժ բարեղի և շէն պատմին,
 Եւ ընշատէր՝ բնակիչք նորին:
 Գիւղք սորին շատ գոյով ասին,
 Բարեղի, յոյժ արդիւնային,
 Արգասաբեր, առատային,
 Եւ գիւղականք՝ ցընծուն 'ի նմին:
 Պատմեցեալ գուլ 'ի ծերոց հին,
 Յորոց տեսալ մինչ ցարդ ասին,
 Թէ շատ լեալ է բարի սորին,
 Յորդ, լի և յոյժ արժանագին:
 Զի տասն և ութ լիտրն ալիւրին՝
 Մին զուռուշի առեալ ասին.
 Տասն հինգ փարայի՝ լիտր իւղին,
 Սոյնպէս արժան՝ ու այլ իրաց գինս
 Եւ զի սոմառն զահրէին՝
 Երկու զուռուշ գուլ ցորենին,
 Եւ մէկ զուռուշ ըզքարւոյ գին,
 Որ չաւտալի այնքան մեղ թուին:
 Շիրմի մի կոյ գրեցեալ, ասին,
 Թառի քառսուն ձու՝ փողոյ մին.
 Զուրկ լըծողին զընտանին իմ,
 Ի սըղուլթեան ժամանակին:
 Յայսմ բանէ յայտնի լինի
 Նախ լեալ է այլ արժանագին,
 Զու և այլ բարեք նման սըմին,
 Յորեան, դարին և պարենին:
 Իսկ 'ի մերս ժամանակին՝
 Լի առատ էր ամէն բարին,
 Զի 'ի սոմառն ցորենին՝
 Մինչ և ցըվից զուռուշ տային:
 Եւ մէկ լիտրն իւղին, մեղրին՝
 Վաթսունական փարս տային.
 Եւ այլ իւրքն ըստ այսմ էին,
 Շատ և արժան ամենեկին:

Բայց և քանզի ազգ մարդկային,
Մինչ բարութեան միջի լինին,
Յայնժամ թողուն զկամս Արարչին,
Եւ հետեւին կամաց չարին:

Որպէս ահա յայս ներկային
Ի գտնագոյն տարւոյս վերջին,
Յորում մեղք մեր յաշխակեցին,
Եւ 'ի յերկինս բողբոջին:

Ձի 'ի սիրոյն աստուածային
Գլուխը պաղեալ տիր ջրբոսային,
Մոյլ 'ի յաղօթս, հեղգ առ բարին,
Եւ ժիր 'ի գործ չարասիրին:

Բայց յատկապէս յայս մեր կողմին՝
Բազմաբեայ շարժք գիպեալք լինին,
Քաղաքին և թեմից սորին,
Եւ այն կարի յոյժ ահագին:

Որ յերերմանէ յայն շարժին՝
Անթիւ շինուածք քլլխաւ իջին,
Կործանեցան թընգմամբ ուժգին,
Քակտեցան վանք ևս՝ ընդ նոսին:

Եւ բերք բերոց ներքոյ մնացին,
Մարգ, անասուն 'ի միտսին,
Մեռան, կորեան կըսկըծագին,
Տեառց ողբն ու լաց՝ զջղս լցին:

Յամուկք պէս պէս տիր վըշտագին,
Ընդ որս վատ ցաւն անտանէին՝
Շատ տարի է կայ յայս կողմին,
Եւ ոչ բաւնի հեղուն նորին:

Ի անկանիւ միշտ ժանտախտին,
Յերկար տեւելն՝ յոյժ սաստկագին,
Յողունց անձանց կոտորածին,
Լնանիւ վայրաց՝ ողբոց գուժին:

Ի ժամանեւ մերս թըւին՝
Լրանալ հազար երկհարիւրին,
Այլ և վաթսուն բարեկալ նըմին,
Եւ 'ի յամենանըն յունիսին:

Տաւառը աստղն գոլ որ շարժին,
Երևեցաւ 'ի վեր յերկին,
Եւ 'ի կողմանն հիւսիսային,
Յուցանքաւոր և սոսկագին:

Ըստ գուշակման նոյն նըշանին՝
Անկաւ ժանտախտ կողմն այս երկրին,
Եւ սաստկացաւ տիր իջրտագին,
Մինչ եօթն ամիս տեւեց 'ի սմին:

Ձախորդութիւնք յետ այն հասին,
Յամեն կողմէ պատնէշեցին,
Բազմակերպ վիշտք մեզ տիրեցին,
Մինչև ցարգ կեանք մեր մաշեցին:

Իսկ 'ի վաթսուն և մէկ թըւին,
Եւ մայիսի ամսոյ վերջին,
Իսպառ փակեալ եղև երկին,
Կաթ մի անձրև չէին 'ի գետին:

Անպք, արտորայք բոլորովին,
Բոյսք և կանանչքն հողային,
Տիր չորացան ամենեկին,
Խոտ անասնոց ոչ գտանէին:

Իբրև պղնձն ձեղ երկին,
Եւ իբր երկաթ դարձաւ գետին,
Մարգ անասուն նըաղէին,
Ջուրք աղբերաց պակասէին:

Ի սերմանեալ տրման հացին՝
Սերման չափ ևս չանկաւ ձեռին,
Քաղաք և գիւղք բոլորովին
Յարգեանց հացէ զուրկ մընացին:

Յետ այնր սըղեաց գինըն հացին,
Եւ անկաւ սով տիր սաստկային,
Երկու հօիիցն իշանէին
Մինչ մէկըն՝ մէկ զուռուշ տային:

Եւ այլք զայլ ենչ առճարէին,
Ջըղուելի լեալ և զաղաղին,
Ձէ հարկ յիշել զանուն նոցին,
Անճար գողով զայնս ուտէին:

Ձի մէկ սոմաւըն ցորենին,
Երկու հարկուր զուռուշ տային,
Հարկուր եէթմիշ էր դարւոյ գին,
Այլ իբք՝ ըստ այսմ էր թանկագին:

Իոյր կերել երացն գին,
Տանտպատիկ ել գին նոցին,
Մինչ զի մէկ հատըն հաւկըթին՝
Երեք փարի հազիւ տային:

Շրորան ու աղբըն տաւարին՝
Խանթիգ զասպաց խըխըլէին,
Ջարին անաւալ եկեալ կերին,
Հայ, թուրք աղբատք՝ զայս առնէին:

Հարունք ըզբողս մերկեցին,
Ձամօթ պատկառ 'ի բաց եգին,
Ջատընգեոյ ու այլ զուակս առին,
Ի գրունս անկեալ մուրանային:

Եւ աղջկունք 'ի տանց ելին,
Ձամեստութիւն 'ի յետս արկին,
Սակըս միոյ բեկտոր հացին՝
Ի գուհս անկեալ տիր լաղագին:

Ջառամեալ ծերք հիւանդագին,
Որք կալ յոտին ոչ կարէին,
Յըպի յեցեալ գողգողային,
Նըւաղ ձայնիւ զտուրս հայցէին:

Եւ պառաւունք նըման նոցին,
Հիւծեալ գիմք 'ի գուրս ելին,
Նըրջել երեք ոչ կարէին,
Յանկեան ուրեք անկանէին:

Ապա և գիւղք շըրջակային՝
Թէ Բասենու, թէ մերս դաշտին,
Առհասարակ՝ հաց չուռէին,
Կոպսոն և խոտ էր կեր նոցին:

Որք ըզտաւարս թէ ուռնէին՝
Մորժեալ կերեալ ըսպառեցին,
Յետ այնր և ըզպաշխս նոցին
Խաշեալ, խանձեալ, զայն ուտէին:

Իսկ և 'ի վասն լուծման պատին՝
Մեղադրել չըկայր նոցին,
Ձի է կարի անտանէին՝
Նոթի մնալ ու զօրել քաղցին:

Ոմանք ըզլոտ ընդ եռնային
 Քաղեալ, խաշեալ զայն ուռէին,
 Եւ մոլեխինդ հետքն խաշեալ,
 Կերեալ, յետ այնր մեռանէին:
 Բազումք 'ի յայնց առ այսր եկին,
 Ի դրունս անկեալ մուրախային.
 Տըկարքն անկեալ ճանապարհին,
 Նոթի մնացեալ մեռանէին:
 Աղքատքն հազարքն հազարին,
 Յանցս փողոցաց և շուկային,
 Նոյնպէս և 'ի գաւիթս ժամին,
 Նըստեալ, լալով մաղկութէին:
 Այնք որ շըրջէ կարող էին՝
 Ի դրունս երթեալ մուրախային,
 Չալեալ ըզգրունս՝ կողկողային,
 Մինչ զի գգարինս յորք շարժէին:
 Ոմանք զմանկունս՝ այլոց տային,
 Գըրով, թըղթով յայնս յանձնէին.
 Մինչ զի Տաճկաց երս տային,
 Սակս անձարակ մնալոյ նոցին:
 Սոսկալի մի բան պատմէին,
 Թէ ոմանք կինք, յոյժ դժնային,
 Իւրեանց աղայոց զէհիր առեալ,
 Գունէ զերծցին վըշտէ նոցին:
 Իսկ ունեցեալն հասարակին՝
 Նըւաղեցաւ հացն և կերին,
 Այնոքի՛ թէ և ունէին,
 Մեծ աղբոսմութեամբ զայնս ուռէին:
 Հառաչ, բառաչ, դոշիւն ուժգին,
 Չայնք ցաւալեաց յորքս լըցին.
 Առհասարակ զամենայն
 Յորք, յարտասուս առշարժէին:
 Ի տիրելոյ քաղցոյ՝ նոցին,
 Ու 'ի դոբելոյ սեամաղձին,
 Գոյնք երեսաց հարեալ դեղին,
 Մեռելոց իսկ նըման էին:
 Մարմինք նըքթեալ խամրեալ էին,
 Եւ 'ի յուժոյ լըքեալ էին,
 Անգամ շարժիլ ոչ կարէին,
 Եւ ոչ փոխել քայլ մի ոտին:
 Իբր մեռելոց գին ունէին,
 Քան կենդանւոյ գոյոյ կերպին.
 Շատ հոգևոր՝ անկեալ գետին՝
 Գունձըս փողոց մեռանէին:
 Բազումք խնթեալ մոլեգնէին,
 Որոց շատքն կին մարդ էին,
 Անկեալ փողոցս՝ 'ի շուկային՝
 Զորս արգելել ոչ կարէին:
 Որք յաւուրս ինչ այսպէս մնային,
 Յետ այնր նուաղեալ անկանէին,
 Իբր անասուն անխօս հայեալ,
 Անընչացեալ մեռանէին:
 ԶԷկայր փողոց՝ ուր ոչ կային,
 Եւ ոչ շուկայ՝ յորում էին՝
 Հիւանդք, աղքատք, նուաղեալք, նոցին
 Եւ մեռելոց անկեալ մարմին:

Լացէք, լացէք, աղքէ և աղինք,
 Հարք և եղբարք ամենեքին,
 Դաւալն ողբով արտասուագին
 Զմեզ կարնեցիս յոյժ լալագին:
 Աւաղ, եղճկ, կըսկըծագին
 Դուք կարգացէք մերս անձին,
 Հեռաբընակ և մերձագին,
 Այլ և անցորդք ճանապարհին:
 Զի այս գիպուածք, որ մեզ հասն՝
 Աղէտալի է դառնագին.
 Բազումք մեռան և շատք կորեան
 Թըշուառ կենոք ողորմագին:
 Զոկք որր աղայոցն ցաւագին,
 Որք գըլխեաց, մերկ, բոկոտին,
 Կարօտ գոլով փըշուր հացին,
 Ողբով, լալով միշտ շըրջէին:
 Որք հոսարակ միլակ էին՝
 Ի ձեռն եղեալն՝ ապառեալ կերին.
 Եւ չգոյելոյ առևտուրին՝
 Պարտեզ՝ յայլոց փոխ առնուին:
 Բազումք ըզշատ իրս ծախեցին.
 Զկահք կարասիս վաճառեցին,
 Իոլորն ետուն 'ի կիսագին,
 Վասնի հացի և ապրուստին:
 Յետ այնր և այլ փոխ ոչ տային,
 Եւ միմեանց ոչ հաւատային,
 Ուստի կարի անձար մնացին,
 Ոլոր մոլոր վարանէին:
 Շատք տամբ աստի ելեալ շուկան,
 Եւ յայլ աշխարհ վըտարեցին,
 Եւ այլ նըւաղուրկ մուրացիկ լեալ,
 Կաղտ կամ յայանի մուրանային:
 Արք անուանիք ևս ընդ ոսմին,
 Վարպետք գիտունք ընդ արհեստին՝
 Ամաչելով մուրանային,
 Տըւողքն ևս՝ պատկառնէին:
 Եւ այլ բազում բանք վըշտագին,
 Որք եղեն աստ և թեմս սորին.
 Սիրտ մեր և ալք ողբով ընանին.
 Վասն այն՝ 'ի բաց արկաք դիտին:
 Բոյլք աղքատաց՝ ընդ այր, ընդ կին,
 Առ առաջնորդ Հայրեն գային,
 Յայգուէ առուրն ու երկնային
 Լալով ըզտուրս խնդրէին:
 Ապա նա ինքն և պանծալին
 Հայր Կարապետ՝ յարգոյ Հայրին,
 Խորհըրդակցեալ՝ ոչ մեծ իշխանին,
 Յաղաք Աղա բարեպաշտին,
 Նա ինքն Աղան, գըրյարգեցին,
 Չեռամբ Արհի Առաջնորդին,
 Տնանի ալքատաց հինգ հարիւրին՝
 Զաուրս ծածկաբար առաքէին:
 Յամէն յամիս ուղարկեցին,
 Ամէն տանց՝ իւր բաւականին.
 Այնու հոգալ ըզպարէնին,
 Եւ հոգեպահ իւրեանց անձին:

Նոր քանձանակ հաստատեցին,
Ուր և ըզտուրս արկանէին:
Անտի և ըս տնանկաջ տային,
Որով նօթի չըմընային:
Այլ և յինքեանց ներառանձին
Զընտանի գոյս հաւաքեցին,
Եւ ընդ արդեանց քանձանակին՝
Կարօտեւոյ առաջխեղին:
Իսկ երջանիկ վէհապետին,
Եփրեմ ընտիր Սըրբազանին՝
Լըւեալ զայս լուրըս ջաւագին,
Հոգըս տարեալ իւրեան հօտին:
Մածուկ յըզեաց զտուրս լիովին,
Տալ աղքատաց՝ ստ բաւականին:
Առնել ապրուստ և պարեկին,
Եւ չըմընալ խեղճ, լաւագին:
Որ և բարձու իւր հրամանին,
Եւ խորհրդովն Անօգին,
Տնանի աղքատաց զայն բաշխէին,
Ըստ կանոնի ամսականին:
Այսու տըրովքս և շահեցին
Զյոքնաթիւ հոյրս տնանկին:
Զորըս կարօտ զուրկ չըթողին
Ի սոյն սովու ժամանակին:
Եւ այլ աղքատք, որք միշտ գային,
Այլ կերպ և զայնրս շահէին:
Թապախ տալով՝ ի ձեռն նոցին,
Ժողովել զտուրս յեկեղեցին:
Մինչ երկարեալ սով միջոցին,
Հայնք հոլով յոյժ թանկագին,
Բազումք լինել և աղքատին՝
Զբաւէ նոցա տուրք մարդկային:
Ապա այցող և իսկ բարին,
Տէր մեր Քրիստոս աբայն վերին,
Որ ի ցամառ ժամանակին՝
Զողորմութիւն յիշէ նք նըմին:
Ըզընակաջ տար աշխարհին,
Եբաց զնոցին միտս առ բարին,
Իերել զահարայս և այլ կերպին,
Լինել ինքեանց շահել նովին:
Ի չորս կողմանց միշտ բերէին,
Շատ՝ ի տանէն Պարսից երկրին:
Առատ լըցեալ լիացուցին:
Բայց զինանէր գինըն նոցին:
Քաղաքացիք՝ նք գիւղականին՝
Զհոգեպահին այնու արարին,
Եղև սահի՛ խնամոց վերին,
Երկու կողմանց լեալ շահ անձին:
Արդ ձըգեալ եմք զայս ի յերկին,
Մնամք ըսպասեալ խնամոց Փրկչին,
Ինքն յայց ելցէ իւրում հօտին,
Որ եմք իւրոյ արեանըն գին:
Այլ և համայն իւր ստեղծուածին՝
Այլակըծս մարդէ սեռին,
Անասնոց և հաւուց տարմին,
Ողորմեսցի այնք բոլորին:

Պարզեացէ ցօղ երկնային,
Պատշաճ տեղալ յորք անձրեկն,
Որով անդոց բոյսք զուարճացին՝
Կանանցք հողոյն բողբօղեցին:
Իսկ և վաթսուռ երկու թըւին,
Յապրել ամառ և մայիսին,
Եղև նուազելն անձրեկն,
Կասկած պատեաց զմեզ արբումգին:
Այնու կերով և ապրեցին,
Վայելելով ուրախացին,
Մարդ, անասուն, թըւչունք օդոյն,
Փառքս տալով տիր գոհացին:
Քանդի մեղք մեր որ լեւնացեալ
Անթիւ և քան ըզլափն անցեալ,
Այն վասն երկինք կըրկին փականալ,
Անձրեկ յաճոց եղև հատեալ:
Արտորայից բոյսք ոչ բուսեալ,
Այլ և բուսեալքն չըրացեալ,
Որ վերստին սովն անկեալ,
Եւ սըղու-թիւնն աստեղացեալ,
Յետոյ սակաւ միջոց անցեալ,
Իմն փաշայն մանգուլ եղեալ,
Այլ փաշայ աստ մանսուպ եղեալ,
Նոր միւսելիմ նորին նըստեալ,
Յետ այնր քերվանք միշտ յաճախեալ,
Հեռ ըզհեռք զահրայ բերեալ,
Եւ զայլ կերպս առհասուցեալ,
Այնու ընակիչքս եղաք ապրեալ:
Հոկտեմբերի քսան եօթն հասեալ,
Յայնժամ հոգեւ փաշայն եկեալ,
Իպրայիւ Նազըր կոչեցեալ,
Այլ բարեմիտ բարեհաջակեալ:
Աղքատ բնակչացս շատ խնամ ամեալ,
Իւրև ըզայր միշտ հոգացեալ:
Պարսից Շահին իսկոյն գըրեալ,
Եւ զծանր ընծայս առ նա յըղեալ:
Նոյնպէս և այլ առատ կողմանց,
Գըրեաց նոցունց իշխեցողաց,
Զորըս սիրով իսկ յորդորեաց,
Իարձր հրամանաւ և պատուիրեաց:
« Թէ որքան է ձեզ կարելի՝
Եւ ընծակաջգ ձեր աշխարհի,
Զահարայ, բըրինձ, և զայլ կերպ,
Իւրցէն առ այսր ժամանակի »:
Որ ևս քան զէս յաճախեցին,
Զահարայ, բըրինձ շատ բերէին:
Որով կարի լիացուցին:
Թէ և էր գինըն թանկագին:
Քանդի այն ևս եղև բարի,
Եւ աշղակ իսկ վաստակի,
Զի ըստ չափաւ բերեալ հացի
Նոյնչափ տային դուռուչ ոսկի:
Իսկ ի ձըմնն մինչ ժամանեալ,
Փաշայն գըրով խնամ տարեալ,
Զի աղքատաց իւրեանց աղքին,
Անթիւ անձանց թային կապեալ:

Եւ էր իշխանն իւր խորհեալ,
Աղքատածոցն սահմանեալ:
Յորս բիրաւոր աղքատք եկեալ,
Ի հեռաւոր տեղեաց դիմեալ:
Ի գեկոտմբեր ամոյս սկսեալ,
Եւ մինչ 'ի մարտ առհասոցեալ,
Հացիւ և այլ կերակրեալ:
Յօրն երեք հեղ կերակրեալ:
Բայց 'ի մէջ այնց վառ ցաւ անկեալ,
Այնու ցաւով բազումք մեռեալ,
Ողորմելի դառն կենօք
Ի յաշխարհէ եղևն ելեալ:
Մերկացեալ հանգերձ աւուեալ,
Եւ հիւանդաց հոգն տարեալ,
Մեծաւ գրթով խնամածու լեալ,
Առատօրէն լիացուցեալ:
Մինչ թիւն վաթսուն երեք մըտեալ,
Նըղոյ խնամոց Տեառն երևեալ,
Ձի 'ի յապրիւ ամոյս սկսեալ՝
Յամպոց անձրեք միշտ տեղացեալ:
Յայնժամ համայնք առջանացեալ,
Ի սերմանէ տիր փութացեալ,
Խաղումք ըզտեմ գընով գընեալ,
Թէ և զսակաւս սերմանեալ,
Բայց հրամանաւ հօր Արարչին,
Մինն ետ ըզբիւր ըզհաս հասկին,
Այլ և ինքնին ինքնեկ ելին,
Ի գաշտս 'ի սարս արգիւնային:

Ի կալոցի ժամանակին
Յամայր համարս՝ յորքն ընցին,
Մինչ զի այնք ևս ոչ բաւէին,
Անթիւ հորն համարարեցին:
Եւ զայլս բերեալ վաճառէին,
Օր յաւուր էջ գինըն հային,
Մինչ զի սոմաղն ցորենին,
Երսուն զուռուշ գիւրեաւ տային:
Նոյնպէս գարին և այլ կերէին,
Առատացաւ համայն բարին,
Իջեալ եղև գինըն նոցին,
Իբր 'ի տասէն իջաւ 'ի մին:
Ուրեմն փառք Բարերարին,
Եւ պարգևող մարգարիին,
Որ և անհուն ողորմութեամբ,
Միշտ այց առնէ իւր ատեղծուածին:
Բայց 'ի բերմանց մեր գըժթախտին,
Յաւ մի գիպեալ նոյն փաշային,
Յետ շատ կրեոյն զայն խնստագին՝
Մեռաւ աւուր նոյնմբերին:
Իսկ 'ի վաթսուն և չորս թըւին,
Փեաղըրուարի քսան և եօթին,
Փապա փաշայն անթիւ զօրօք,
Ի մանուկ եկն աստ խրոխտագին:
Յոմանց եղբարց առհարկեցայ,
Նուաստս Յովհաննէս Նոտար ծառայ,
Ջբանս 'ի կարճոյ գրեւ փութացայ,
Ձերգ զիս յիշման տիր բաղձացայ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՄՔ

Ի ծով աշխարհիս ալէկոծիս, և մարգարիտ մի 'ի ձեռն չբերիր. ես քեզ խրատ տամ՝ 'ի ծովու յեզրն խորհուրդ արաւ:
Հարկւորին հարկիք տուր՝ վասն իւր հարկեացն. անհարկուին հարկիք տուր՝ վասն քո հարկեացք:
Երեք տեղ փորձել պիտի զմարդն. 'ի սեղանն, 'ի վաճառն, 'ի շահապարհն:
Խօսքն մօտ 'ի գիտնաւորն մեծ է. վասն զի խօսքն յերկնից եկաւ, իսկ դու թիթեւ մի բռներ:
Լեզուն ճուղ ունի՝ քան զօճու. մէկն մարգարիտ կու թափէ, մէկն ժաշէ:
Իռնութեամբ բան 'ի հուն չելանէ. թէ համբերես և ոչ շտապիս՝ 'ի ժաշէ՝ հալուէ ժողովես:
Թէ լսես՝ շատ է քեզ, թէ չլսես՝ ինձ ինչ է:
Ե՛ որ ոչ գիտէ, և ասէ՝ ոչ գիտեմ. ուսմ զնա: Եւ է՛ որ ոչ գիտէ, և ասէ թէ գիտեմ. փախիր 'ի նմանէ: Եւ են՝ որ գիտեն, և ասեն՝ ոչ գիտեմք. ուսիր 'ի նոցանէ:

ՈՍԿԻՓՈՐԻԿ